

ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Սևակ Պողոսյան

*Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների
դատախազության ավագ դատախազ*

Ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը քրեական իրավունքում հնագույններից է: Պատմական տեղեկությունները վկայում են, որ հանրային շահերին հարկադրաբար վնաս պատճառած անձի պատասխանատվությունը բացառող սկզբունքները ծագել են սովորության իրավունքի նորմերի ձևական ամրագրման ժամանակ:

Ավելի արժեքավոր բարիքի պաշտպանության համար վնաս պատճառելու թույլատրելիության մասին դրույթները հայտնի էին հռոմեական իրավունքին: Ուլպիանոսի «էդիկտներում» նշվում էր, որ «երկու անհավասար բարիքների միջև կոլիզիայի դեպքում յուրաքանչյուր հայց բացառվում է», «ոչ մի պատասխանատվության չի ենթարկվում նա, ով սեփական ունեցվածքը փրկելու համար ծովն է նետում ուրիշի ապրանքը»¹: Հին հռոմեական իրավունքը թույլ էր տալիս քանդել տունը հրդեհի ժամանակ՝ հետագայում մեղավորի դեմ հայց ներկայացնելով, ուրիշի գույքը ինքնակամ վերցնել դրան սպառնացող վտանգի դեպքում և այլն: Ծայրահեղ անհրաժեշտության սկզբունքները կիրառվում էին նաև պարտավորությունների կատարման անհնարինության դեպքերում²:

Սակայն հին հռոմեական իրավունքում բացակայում էր ծայրահեղ անհրաժեշտության օրենսդրական բնորոշումը: Դրա ընդհանուր հայեցակարգը կիրառվում էր միայն գույքային իրավունքների և շահերի պաշտպանության համար:

Ծայրահեղ անհրաժեշտության իրավունքի նկատմամբ ավելի հանգամանալից մոտեցում էր դրսևորում միջնադարյան կանոնական իրավունքում, համաձայն որի՝ արդարացվում էին այնպիսի գործողություններ, ինչպիսիք էին պատշաճ պայմանների բացակայության դեպքում կրոնական ծիսակատարությունը, եկեղեցական կանոններով արգելված սնունդ ընդունելը (օրինակ՝ պահքի ժամանակ), տված երդումը խախտելը: Կյանքի պաշտպանության նպատակով կարելի էր զոհաբերել մեկ ուրիշի ցանկացած այլ բարիք՝ կյանքը, ֆիզիկական անձեռնմխելիությունը, գույքը: Նույն նպատակով թույլատրվում էր նաև ցանկացած պարտականության խախտում: Ծայրահեղ անհրաժեշտության պարագայում օրենքով նախատեսված արգելքները խախտելու համար պատիժ չէր նշանակվում կամ պատիժը մեղմացվում էր: Օրինակ՝ կարիքից դրդված գողությունը պատժվում էր միայն այն կրկնվելու դեպքում: Միջնադարյան կանոնական իրավունքում մշակվեցին և գործնական կիրառություն ստացան այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են «Կարիքը օրենք չի ճանաչում», «Այն, ինչ արգելված է օրենքով, թույլատրելի է դարձնում անհրաժեշտությունը», «Անհրաժեշտությունը օրենք չի ճանաչում, և ինքն է իր համար օրենք ստեղծում»³:

Օրենքով պահպանվող բարիքները դրանցից պակաս արժեքներ վնասելու միջոցով պաշտպանելու գաղափարները արտացոլված են նաև հին գերմանական իրավունքում: Կեսթգոթական օրենքների համաձայն՝ աղքատը, որը չէր կարողացել աշխատանք գտնել և իր կամ մերձավորների քաղցը հագեցնելու համար հափշտա-

¹ Ст'ю Энциклопедия государства и права / под ред. П. И. Стучки. Т. 2, М., 1970, էջ 389:

² Ст'ю նույն տեղում, էջ 390:

³ Նույն տեղում, էջ 423:

կություն էր կատարել, մեղավոր չէր համարվում և պատժի էր ենթարկվում միայն երրորդ անգամ հափշտակություն կատարելու դեպքում: Բացի այդ՝ նշվում էր, որ մոլորվածը կարող է կրակ վառել ուրիշի անտառում, քաղցը հագեցնելու համար պտուղներ պրկել ու ուտել, հոգնած ձիուն արածեցնել ուրիշի մարգագետնում և այլն: Հատկանշական է, որ նման գործողությունները պայմանավորվում էին ոչ թե ծայրահեղ անհրաժեշտությամբ, այլ գերմանական այն ընդհանուր գաղափարով, որ համայնքի բոլոր անդամները պարտավոր են օգնել իրար¹:

XVII դարում Եվրոպայում ծագեցին բնական իրավունքներն ընդունող գաղափարներ: Բնական իրավունքի տեսության շնորհիվ տեղի ունեցավ ծայրահեղ անհրաժեշտության գաղափարի հետագա զարգացումը: Այս հարցին իրենց աշխատություններում անդրադառնում են Հրոցիոսը, Պուֆենդորֆը, Վոլֆը: Նրանք իրավունքը դիտում են մարդկանց միջև հասարակական հարաբերությունների պայմանագրի արդյունք: Այս գաղափարի համատեքստում ձևավորվում է այն պատկերացումը, որ ծանր կարիքի ժամանակ առաջանում է գույքի օգտագործման վերաբերյալ նախկին սովորության իրավունքը: Ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարված գործողությունները բացատրվում են մարդկային թուլությամբ: Երբ անհրաժեշտության ճնշումը հասնում է ծայրահեղ սահմանի, և դժվար կացությունից դուրս գալու այլ ելք չի մնում, քան օրենքը խախտելը, ապա ծագում է բնական իրավունքը, և օրենքը խախտելը տվյալ դեպքում պատժի չի հանգեցնում:

Հուգո Հրոցիոսը գտնում էր, որ մարդկային բնության և մարդու ուժերից վեր է մշտապես հետևել օրենքներին ու չխախտել դրանք: Երբ մարդը բնության պահանջների թելադրանքով հանցանք է կատարում, չպետք է պատժվի: Եթե մարդը չի կարող այլ կերպ փրկել իր կյանքը, քան ուրիշին վնասելով, ապա նա կարող է դա անել բնության տված իրավունքի շնորհիվ²:

Պուֆենդորֆի տեսությունը հիմնված է ինքնապաշտպանական բնագրի գաղափարի վրա: Պուֆենդորֆի կարծիքով, մարդը չի կարող ձերբազատվել այդ բնագրից: Օրենսդիրը, սահմանելով իր պահանջները, առաջին հերթին հոգ է տանում քաղաքացիների բարեկեցության մասին՝ աչքի առաջ ունենալով մարդու բնությունը, որը հարկադրում է նրան վտանգի դեպքում ամեն կերպ փրկություն փնտրել: Պուֆենդորֆը առաջինն էր, որ մոդելավորեց մարդկային երկու կյանքերի բախման իրավիճակը: Նա պնդում էր, որ եթե նավաբեկության ժամանակ մեկը բռնում է տախտակից՝ փրկվելու համար, իսկ մյուս նավաբեկյալը փորձում է նույն տախտակից բռնել, ինչը կարող է երկուսի մահվան պատճառ դառնալ, ապա առաջին նավաբեկյալը լիովին իրավունք ունի թույլ չտալու դա: Այդ արարքը չի կարող հանցավոր համարվել³:

XVIII–XIX դարերում ծայրահեղ անհրաժեշտության հիմնախնդիրները ուսումնասիրվում են իրավունքի փիլիսոփայության շրջանակներում: Ֆիխտեի, Կանտի, Հեգելի, Ֆոյերբախի աշխատություններում ծայրահեղ անհրաժեշտությունը դիտվում է քրեական իրավունքի հիմնարար ինստիտուտ:

Ֆիխտեի տեսությունը հիմնվում էր այն իրադրության գնահատման վրա, երբ դրա այս կամ այն մասնակիցը պետք է մահանա, հակառակ դեպքում մահը հավասարապես սպառնում է երկուսին էլ: Ֆիխտեն կարծում էր, որ իրավական հարաբերությունները իմաստավորված են միայն փոխգոյակցության պայմաններում, իսկ եթե այդ փոխգոյակցությունն անհնար և առկա է հակամարտություն, ապա որևէ մե-

¹ Տե՛ս **Винокуров В. Н.** Правомерное причинение вреда в состоянии крайней необходимости. Красноярск, 2001, էջ 13:

² Տե՛ս նույն տեղում, էջ 14:

³ Տե՛ս **Паше-Озерский Н. Н.** Необходимая оборона и крайняя необходимость. М., 1962, էջ 131:

կին վնաս պատճառելը չի կարող համարվել ո՛չ իրավաչափ, ո՛չ էլ անիրավաչափ¹: Նման դեպքերում իրավունքի մասին խոսելն ավելորդ է: Հակամարտության հանգուցալուծումը անբողջովին կախված է ֆիզիկական ուժից և կամայականությունից: Սակայն, քանի որ արարքը կատարելուց հետո անձը ամեն դեպքում կանգնում է օրենքի առջև, ապա անհրաժեշտության իրավունքը կարելի է դիտել որպես ամեն տեսակի օրենքի ազդեցությունից իրեն զերծ համարելու իրավունք: Այսպիսով, Ֆիխտեն կարծում էր, որ ծայրահեղ անհրաժեշտությունը կամայականության իրավունք է:

Կանտը ծայրահեղ անհրաժեշտությունը բնորոշում էր որպես «հարկադրանք առանց իրավունքի»: Նրա կարծիքով, քրեական իրավունքը «կատեգորիկ իմպերատիվ է», հանցագործության համար հատուցում է: Դա արդարություն է, առանց որի չարժե ապրել: Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում կարելի է խոսել ոչ թե «կարիքի իրավունքի» (ինչպես ընդունված էր կանոնական իրավունքում), այլ միայն ուրիշի նկատմամբ թույլատրելի բռնության մասին: Ընդ որում, այդ արարքը թույլատրելի է ոչ թե օբյեկտիվ, այլ սուբյեկտիվ հիմքով: Եթե նավաբեկյալներից մեկը տախտակի վրայից զցում է մյուսին իր կյանքը փրկելու համար, ապա այդ դեպքում չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, որովհետև ոչ մի օրենք այդ արարքը կատարողի վրա որևէ ազդեցություն չի կարող ունենալ. քրեական պատժի անորոշ և ապագայում սպասվելիք սպառնալիքը չի կարող գերազանցել տվյալ պահին իրականում սպառնացող վտանգը²:

Հեգելը ծայրահեղ անհրաժեշտությունը համարում էր կարիքի իրավունք: Նա գտնում էր, որ սեփական իրավունքը այլ անձի իրավունքի հաշվին պաշտպանելը իրավաչափ է դառնում այն դեպքում, երբ անձը հարկադրված է լինում պաշտպանելու իր կյանքը՝ որպես կեցության հիմք՝ այդ կեցության մասնակի, եզակի դրսևորման, օրինակ՝ գույքային իրավունքի հաշվին³: Հեգելի կարծիքով, եթե կյանքը կարելի է փրկել հաց գողանալով, ապա այդ դեպքում, չնայած ուրիշի գույքային իրավունքը խախտվում է, այնուամենայնիվ ճիշտ չէր լինի արարքը գողություն համարել: Նման արարքն արգելելը կնշանակեր հաստատել տվյալ անձի իրավագուրկ լինելը, ժխտել նրա ազատությունը: Հեգելը գտնում էր նաև, որ ծայրահեղ անհրաժեշտության վիճակը ծագում է այն ժամանակ, երբ վտանգն անմիջական է: Կենսապահովման համար բազմաթիվ պայմաններ են անհրաժեշտ, և երբ անձը մտածում է ապագայի մասին, նա դիտարկում է այդ բոլոր պայմանները: Բայց ապագան կորսվում է պատահականությունների մեջ. քանի որ տվյալ պահին կյանքն օգնության կարիք ունի: Միայն ուղղակի, տվյալ պահի կարիքը կարող է հակաիրավական արարքի իրավունք տալ, որովհետև այն չկատարելը հանգեցնում է անձի ազատ կեցության ժխտման: Հեգելի կարծիքով, ծայրահեղ անհրաժեշտության վիճակն առկա է նույնիսկ այն դեպքում, երբ պետական շահը պաշտպանվում է անհատի մահվան հաշվին: Եթե պետությունը պահանջում է անհատի կյանքը, ապա անհատը պետք է տա այն: Միևնույն ժամանակ նա նշում էր, որ նման դեպքերը պետք է գտնվեն պետության խիստ վերահսկողության տակ. եթե զինվորը կամ դատավորը ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է մարդկանց գրկել կյանքից, ապա հստակ պետք է նշվի, թե որ մարդկանց և ինչ պայմաններում է դա թույլատրելի⁴:

XVIII–XIX դարերում ծայրահեղ անհրաժեշտության հայեցակարգը մշակվում է նաև Եվրոպայի քրեագետների կողմից: Գերմանացի իրավաբան Կարլ Բինդինգը կարծում էր, որ ծայրահեղ անհրաժեշտության բնութագրիչ հատկանիշը երկու բարիքների միջև անցանկալի հակամարտությունն է, որ բարիքներից մեկի պաշտպա-

¹ Ст'ю Энциклопедия государства и права, էջ 423:

² Ст'ю История философии права. СПб., 1998, էջ 180:

³ Ст'ю Энциклопедия государства и права, էջ 423:

⁴ Ст'ю Пионтковский А. А. Учение о преступление, М., 1961, էջ 237:

նութունը պահանջում է մյուս բարիքի վնասում: Քննարկելով նման հակամարտութ-
յունների տարբեր իրավիճակներ՝ Բինդինգը ձևակերպում է ծայրահեղ անհրաժեշ-
տության բնորոշումը: Նրա կարծիքով՝ ծայրահեղ անհրաժեշտությունը անձի այն-
պիսի վիճակն է, երբ սպառնալիքի տակ գտնվող իրավական բարիքը նա կարող է
պաշտպանել միայն արգելված արարք կատարելով: Ընդ որում, Բինդինգը ուշադ-
րություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ իրավական բարիքները տարբեր
արժեքներ ունեն, ուստի թույլատրելի է միայն առավել արժեքավոր բարիքը պա-
կաս արժեքավորի հաշվին փրկելը: Նույն կարծիքին էր Իերինգը, ըստ որի կարծի-
քով՝ ծայրահեղ անհրաժեշտությունը բարիքների ու շահերի միջև պայքար է, և իրա-
վունքը պետք է նախապատվությունը տա բարձրագույն շահին¹:

Ռուսական քրեական իրավունքում սկզբնական շրջանում ծայրահեղ անհրա-
ժեշտության ինստիտուտին պակաս կարևորություն է տրվել: Վաղ ժամանակներում
այն դիտվել է միայն որպես պատիժը մեղմացնող հանգամանք: Մասնավորապես,
Պետրոս I-ի Զինվորական կանոնադրության 195 արտիկուլում նշվում է, որ գողութ-
յան համար պատիժը որպես կանոն պետք է մեղմացվի, եթե անձը դա արել է խիստ
կարիքի կամ քաղցի հետևանքով և ապացուցել է դա:

Հետագայում՝ մասնավորապես 1845 թ., ռուսական քրեական և ուղղիչ պա-
տիժների Կանոնադրության մեջ ծայրահեղ անհրաժեշտությունը նախատեսվեց որ-
պես քրեական իրավունքի ընդհանուր մասի ինքնուրույն ինստիտուտ: Կանոնադ-
րության համաձայն՝ հանցագործություն չէր համարվում օրենքով պաշտպանվող
բարիքին վնաս պատճառելը անձի կամ մեկ ուրիշի կյանքը փրկելու համար, եթե
տվյալ պահին այդ վտանգը այլ կերպ հնարավոր չէր վերացնել: Բացի այդ, հանցա-
գործություն չէր համարվում օրենքով պաշտպանվող բարիքին վնաս պատճառելը
առողջությունը, ազատությունը, սեռական անձեռնմխելիությունը, գույքը պաշտպա-
նելու համար, եթե անձը բավարար հիմքեր է ունեցել կարծելու, որ պատճառվող
վնասը կանխվածի համեմատ ավելի փոքր է:

Հատկանշական է, որ ռուս քրեագետների մեծ մասը ընդունում էր սեփական
կյանքը ուրիշին զոհելու միջոցով պաշտպանելու հնարավորությունը:

Քրեական իրավունքի տեսության մեջ գերիշխում էր ծայրահեղ անհրաժեշ-
տության սուբյեկտիվ հիմնավորման տեսությունը: Մասնավորապես՝ Ն. Դ. Սեր-
գեևսկին ծայրահեղ անհրաժեշտության վիճակը համարում էր մեղսունակությունը
բացառող հանգամանք: Ն. Ս. Տագանցևը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում
կատարված արարքի ոչ պատժելի լինելը հիմնավորում էր նրանով, որ ծայրահեղ
անհրաժեշտությունը համարում էր իրավունքի համար պայքարի միջոց²:

Ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտն իր արտացոլումն է ստացել նաև
հայկական քրեական իրավունքում: Հին և միջնադարյան հայ օրենսդրական մատ-
յաններում ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը քիչ թե շատ ամբողջական
արտահայտվել է Դավիթ Ալավկա որդու կանոնների մեջ: Այդ կանոններից 77-րդը,
ի թիվս այլ հարցերի, խոսում է նաև այն մասին, որ երբ տեղի է ունենում ծնունդ, և
գործընթացն այնպես է զարգանում, որ կան ծնվողի, կան նրա մոր կյանքը պետք է
փրկվի, ապա նախապատվությունը պետք է տրվի նոր ծնվող կյանքին: Մխիթար
Գոշի Դատաստանագրքի 109 հոդվածում քրիստոնյային խորհուրդ է տրվում, նույ-
նիսկ պարտավորեցնում որոշակի հանցանք կատարելու միջոցով խույս տալ իր
համոզմամբ մի այլ, ավելի ծանր հանցանք կատարելուց: Բացի այդ, նա քրիստոնյա-
յին պարտավորեցնում է գողին մահապատժի ենթարկելուց խուսափելու համար
դիմել կաշառատվության, որն այդ դեպքում քրեորեն պատժելի չպետք է համարվի:
Դատաստանագրքի 79 հոդվածը թույլ էր տալիս քաղցը հագեցնելու համար մտնել
ուրիշի այգին և այնտեղ ուզածի չափ խաղող ուտել, սակայն արգելում էր խաղող

¹ Տե՛ս **Винокуров В. Н.** նշվ. աշխ., էջ 16:

² Տե՛ս նույն տեղում, էջ 13:

դուրս բերել այնտեղից: Ղատաստանագրքի 80 հոդվածը արգելում էր պատերազմ զորակոչել նոր անունացածին՝ նախապատվությունը տալով ընտանիքի շահերի պաշտպանությանը: Ծայրահեղ անհրաժեշտության վերաբերյալ համանման իրավանորմեր կան նաև Սմբատ Սպարապետի Ղատաստանագրքում¹:

Պետք է նշել, որ հետագայում հայկական քրեական իրավունքը զարգացավ ռուսական, իսկ հետո՝ խորհրդային քրեական իրավունքի շրջանակներում: Հատկանշական է, որ խորհրդային պետության ստեղծման առաջին տարիներին ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարված արարքը համարվում էր հանրորեն վտանգավոր արարքը, որը, սակայն, չի հանգեցնում սոցիալական պաշտպանության միջոցների կիրառման: Հետագայում ՌՍՖՍՀ 1926թ. քրեական օրենսգրքում հանրային վտանգավորության մասին նշումը վերացվեց: ՀՍՍՌ 1927թ. քրեական օրենսգրքի 13 հոդվածը, ամբողջությամբ վերարտադրելով ՌՍՖՍՀ 1926թ. քրեական օրենսգրքի դրույթները, ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը նախատեսելով անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի հետ, բնորոշում էր այն հետևյալ կերպ. սոցիալական պաշտպանության միջոցներ չեն կիրառվում այն դեպքում, երբ անձը կատարել է քրեական օրենքներով նախատեսված գործողություններ մի այնպիսի վտանգ կանխելու համար, որի առաջը չէր կարելի առնել տվյալ հանգամանքներում որևէ այլ միջոցներով, եթե միայն հասցրած վնասը կանխված վնասի համեմատությամբ ավելի նվազ կարևորություն ունի²: ՀՍՍՀ 1961 թ. քրեական օրենսգրքը ավելի մանրամասն էր կարգավորում քննարկվող ինստիտուտը: Օրենսգրքի 14 հոդվածի համաձայն՝ «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը թեև համընկնում է քրեական օրենքով նախատեսված արարքի հատկանիշներին, սակայն կատարվել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ մի այնպիսի վտանգ վերացնելու համար, որը սպառնալիս է եղել սովետական պետության շահերին, հանրային շահերին, տվյալ անձի կամ այլ քաղաքացիների անձնավորությանը կամ իրավունքներին, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարելի վերացնել այլ միջոցներով, և եթե հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ ավելի նվազ կարևորություն ունի»³:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ծայրահեղ անհրաժեշտության վերաբերյալ տեսությունները այդ իրադրությունում օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու իրավաչափությունն ու արարքի անպատժելիությունը հիմնավորում են կամ սուբյեկտիվ, կամ օբյեկտիվ չափանիշներով: Սուբյեկտիվ չափանիշի կիրառման դեպքում ծայրահեղ անհրաժեշտության վիճակում արարք կատարած անձի արարքների իրավաչափությունն ու անպատժելիությունը հիմնավորվում են նրանով, որ անձը այդ իրադրությունում գտնվում է այնպիսի յուրահատուկ հոգեբանական վիճակում, որը նրան կարծես թե անմեղսունակ է դարձնում: Օբյեկտիվ չափանիշի կիրառման դեպքում անձի արարքներն արդարացվում են, եթե պաշտպանվող բարիքն իր արժեքավորությամբ գերազանցում է վնասվող բարիքը⁴:

Պետք է նշել, որ ներկայումս երկրների մեծ մասի քրեական օրենսդրություններում այս երկու մոտեցումներն էլ ամրագրված են: Դրա հետ կապված՝ այս երկրների քրեական օրենսգրքերում նախատեսված է ծայրահեղ անհրաժեշտության երկու տեսակ՝ արարքի հակահրավականությունը բացառող կամ իրավաչափ ծայրահեղ անհրաժեշտություն և «ներելի» կամ մեղքը բացառող ծայրահեղ անհրաժեշտություն: Իրավաչափ կամ արարքի հակահրավականությունը բացառող ծայրահեղ անհրաժեշտությունը վերաբերում է իրավական բարիքների բախման դեպքերին, երբ նախապատվությունը տրվում է առավել արժեքավոր բարիքի պաշտպանու-

¹ Տե՛ս Ա. Թ. Թովմասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Եր., 1962, էջ 345-352:

² Տե՛ս ՀՍՍՌ 1927թ. քրեական օրենսգիրք, Եր., 1951, էջ 7-8:

³ ՀՍՍՀ 1961թ. քրեական օրենսգիրք, Եր., 1989, էջ 15:

⁴ Տե՛ս Козак В. Н. Вопросы теории и практики крайней необходимости. Саратов 1999, էջ 22:

յանը, այսինքն՝ անձի արարքի իրավաչափությունը և անպատժելիությունը հիմնավորվում են օբյեկտիվ չափանիշով: «Ներելի» կամ մեղքը բացառող ծայրահեղ անհրաժեշտությունը վերաբերում է այն դեպքերին, երբ վտանգ է սպառնում անձի կամ նրա մերձավորի կյանքին, առողջությանը: Ծայրահեղ անհրաժեշտության այս տեսակը նախատեսելու հիմքում ընկած է այն գաղափարը, որ քրեակիրավական հարկադրանքը չի կարող հակահրավական արարքից հետ պահել այն մարդուն, որը իր կամ իր մերձավորի առողջությանը կամ կյանքին անմիջական սպառնացող վտանգից կարծես թե «թռցրել է խելքը», յուրահատուկ աֆեկտիվ վիճակում է: Ծայրահեղ անհրաժեշտության այս տեսակի դեպքում արարքը համարվում է հակահրավական, սակայն անպատժելի՝ մեղքի բացակայությանը հետևանքով: Մեղքը բացառող ծայրահեղ անհրաժեշտության բնութագրական հատկանիշ է այն գաղափարը, որ սեփական կամ մերձավորի կյանքը փրկելու համար թույլատրելի է ուրիշին կյանքից զրկելը: Սրա հետ կապված հետաքրքիր է քննարկել անգլիական «Մինյոնետո» նավի անձնակազմի գործը, որը վթարի էր ենթարկվել: Դրա անձնակազմի չորս անդամներ փրկվել էին և փոքրիկ նավակի վրա էին՝ ջրի ու սննդի շատ չնչին պաշարով: Վթարից տասնինը օր հետո, երբ արդեն բավականին ժամանակ սննդի ու ջրի պաշարը սպառվել էր, նրանցից երեքը սպանեցին չորրորդին և սնվեցին նրանով: Հետո նրանք փրկվեցին, բայց կանգնեցին դատարանի առաջ, որը բոլորին դատապարտեց մահապատժի: Հետագայում մահապատիժը փոխարինվեց վեց ամսվա բանտարկության: Ծայրահեղ անհրաժեշտության սուբյեկտիվ հայեցակարգի կողմնակիցները գտնում են, որ այս անձինք ընդհանրապես չպետք է պատժվեին, որովհետև փրկում էին սեփական կյանքը¹:

Ծայրահեղ անհրաժեշտության ժամանակակից հայեցակարգերն աչքի են ընկնում էական բազմազանությամբ: Այս ինստիտուտի օրենսդրական ձևակերպումները հաճախ կախված են տվյալ երկրի իրավական մշակույթի առանձնահատկություններից:

Մեծ Բրիտանիայի քրեական օրենսդրության համաձայն՝ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում վնաս պատճառելը բացառում է քրեական պատասխանատվությունը: Ավելի արժեքավոր բարիքը պաշտպանելու համար պակաս արժեքավոր բարիքին վնաս պատճառելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու գաղափարը անգլիական իրավունքին հայտնի է հին ժամանակներից: Սակայն անձը չի կարող արդարանալ ծայրահեղ անհրաժեշտությամբ, եթե 1) պատճառված վնասը գերազանցել է սպառնացող վնասը, 2) սպառնալիքը կարելի էր կանխել այլ միջոցներով, 3) վտանգը կանխելու համար պատճառած վնասը ավելի մեծ էր, քան անհրաժեշտ էր. այսինքն՝ կարելի էր ավելի փոքր վնաս պատճառելով էլ կանխել սպառնացող վտանգը:

ԱՄՆ-ում ծայրահեղ անհրաժեշտության հարցերն օրենսդրական մանրամասն կարգավորման են ենթարկված:

Նյու Յորք նահանգի քրեական օրենսգրքի համաձայն՝ արարքը պատժելի չէ, եթե անհրաժեշտ է որպես ծայրահեղ միջոց անձնական կամ հանրային շահերին սպառնացող վտանգը կանխելու համար, երբ պահպանվել են հետևյալ պայմանները. 1) սպառնալիք ներկայացնող իրադրությունը տվյալ անձի մեղքով չի առաջացել, 2) վտանգն այնքան լուրջ է, որ բանականության և բարոյականության սովորական չափանիշներին համապատասխան՝ սպառնացող վտանգը կանխելը ավելի ցանկալի է, քան այն վնասը թույլ չտալը, որը պատճառվում է, և որը կանխելուն ուղղված է օրենքը²:

Ֆրանսիայում մինչև 1992թ. քրեական օրենսգրքի ընդունումը ծայրահեղ անհրաժեշտության օրենսդրական բնորոշում չկար: Այն դեպքերում, երբ պատժելի ա-

¹ Դեպքը նկարագրվում է Պաշե-Օգբեսկու նշված աշխատությունից:

² Տե՛ս Уголовное право зарубежных стран. Общая часть. М., 1990, էջ 16:

րարքը կատարվում էր օրենքով պաշտպանվող շահերը փրկելու համար, դատարանները հարկադրված կիրառում էին հանցանք կատարելուն հարկադրելու վերաբերյալ բանաձևը: Դա բացատրվում է նրանով, որ առկա վտանգի պայմաններում անձը կորցնում է ինքնատիրապետունը և հոգեբանական հարկադրանքի ազդեցությամբ կատարում է քրեորեն պատժելի արարքը: Հետազոտողները նշում են, որ հանցանք կատարելուն հարկադրող ուժ կարող է լինել մահացու վտանգի կամ ծանր ֆիզիկական վնասի սպառնալիքը¹:

Ֆրանսիայի նոր՝ 1992թ. քրեական օրենսգրքում ծայրահեղ անհրաժեշտության օրենսդրական բնորոշում տրվեց: Այդ օրենսգրքի 122.7 հոդվածի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը կատարում է գործողություններ, որոնք անհրաժեշտ են իրեն կամ մեկ ուրիշին կամ գույքին սպառնացող կամ առկա վտանգը կանխելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է անհամապատասխանություն սպառնացող վտանգի լրջության և կիրառվող միջոցների միջև»:

Գերմանիայի քրեական օրենսգրքում նախատեսված է ծայրահեղ անհրաժեշտության երկու տեսակ՝ 1) իրավաչափ ծայրահեղ անհրաժեշտություն և 2) մեղքը բացառող կամ մեղմացնող ծայրահեղ անհրաժեշտություն: Առաջինը նախատեսված է այն դեպքերի համար, երբ հակամարտության մեջ են մտնում տարբեր արժեք ունեցող բարիքներ: Ըստ այդմ իրավաչափ արարք է կատարում այն անձը, որը կյանքին, առողջությանը, ազատությանը, պատվին, սեփականությանը կամ իրավունքի կողմից պահպանվող այլ բարիքին սպառնացող վտանգը կանխելու համար վնաս է պատճառում մեկ այլ բարիքի՝ պայմանով, որ պաշտպանվող շահը զգալիորեն գերազանցում է խախտվածը: Ընդ որում, անձի արարքը պետք է սպառնացող վտանգը վերացնելու համաչափ միջոց լինի:

Ծայրահեղ անհրաժեշտության երկրորդ տեսակը, այսպես կոչված՝ «ներելի» կամ մեղքը բացառող ծայրահեղ անհրաժեշտությունը, նախատեսում է անձի, նրա մերձավորների կյանքի, առողջության կամ ազատության պաշտպանությունը հակաիրավական արարքների միջոցով: Ի տարբերություն ծայրահեղ անհրաժեշտության առաջին տեսակի՝ այս դեպքում կատարված արարքները հակաիրավական են, սակայն բացակայում է մեղքը, եթե նշված բարիքները հնարավոր չէր այլ կերպ պաշտպանել: Այս դեպքում համաչափության պայմանը պարտադիր չէ:

Ճապոնիայի քրեական օրենսգրքում ծայրահեղ անհրաժեշտությունը բնորոշվում է որպես այնպիսի արարք, որը անհրաժեշտ է կյանքին, առողջությանը, ազատությանը կամ գույքին անմիջականորեն սպառնացող վտանգը կանխելու համար: Վտանգը վերացնելը պատժելի չէ, եթե պատճառված վնասը չի գերազանցում սպառնացողը: Սակայն, եթե այդ սահմանը գերազանցվել է, ապա գործի հանգամանքներից կախված՝ պատիժը կարող է մեղմացվել կամ անձը կարող է ազատվել պատժից²:

Ծայրահեղ անհրաժեշտության բովանդակությանը մոտ նորմեր կարելի է հանդիպել մուսուլմանական քրեական իրավունքում: Շարիաթի վարքագծի կանոններում գործում են նորմատիվ կարգավորմանն ուղղված հետևյալ սկզբունքները. «անհրաժեշտությունը արգելվածը դարձնում է թույլատրելի», «թույլատրելի է վնաս պատճառել մասնավորին՝ ընդհանուրը փրկելու համար», «առավել մեծ վնասը կարելի է կանխել ավելի փոքր վնաս պատճառելով», «երկու չարիքներից պետք է ընտրել փոքրագույնը» և այլն³:

¹ Տե՛ս **Крылова Н. Е.**, Серебренникова А. В., Уголовное право современных зарубежных стран., М., 1997, էջ 128,129:

² Տե՛ս Уголовное право зарубежных стран. Общая часть. М., 1990, էջ 302:

³ Տե՛ս **Сюкияйнен И. Я.** Шариат: религия, нравственность, право // Государство и право. 1996, N 8, էջ 125:

HISTORICAL DEVELOPMENT OF EXTREME NECESSITY THE DOCTRINE

Sevak Poghosyan

*Senior prosecutor of the Prosecution office of Kentron &
Nork-Marash administrative districts*

The article discusses the various concepts of extreme necessity, the legal regulations in the criminal law of different foreign countries. Presenting various doctrines and legal regulations related to the institute of extreme necessity in a number of foreign countries, in particular the institute of extreme necessity "excluding the guilt", the author concludes that there are provisions that can be useful for the improvement of domestic criminal legislation.

ИСТОРИЧЕСКОЕ РАЗВИТИЕ ДОКТРИНЫ КРАЙНЕЙ НЕОБХОДИМОСТИ

Севак Погосян

*Старший прокурор прокуратуры административных
округов Кентрон и Норк-Мараш*

В статье рассматриваются различные концепции крайней необходимости, правовые нормы уголовного права различных стран. Представляя различные доктрины, касающиеся института крайней необходимости и правовых норм ряда зарубежных стран, в частности института крайней необходимости "исключающего вину", автор приходит к выводу, что в них содержатся положения, которые могут быть полезны для усовершенствования уголовного законодательства Армении.

Բանալի բառեր – *ծայրահեղ անհրաժեշտություն, «մեղքը բացառող» ծայրահեղ անհրաժեշտություն, իրավաչափ ծայրահեղ անհրաժեշտություն, անհավասար բարիքների միջև կոլիզիա, քրեաիրավական հարկադրանք, օբյեկտիվ չափանիշ, սուբյեկտիվ չափանիշ*

Ключевые слова: *крайняя необходимость, крайняя необходимость «исключающая вину», закономерная крайняя необходимость, конфликт между неравными благами, уголовно-правовое принуждение, объективный критерий, субъективный критерий*

Key words: *Extreme necessity, extreme necessity "excluding the guilt", legitimate extreme necessity, collision between unequal benefits, criminal coercion, objective criterion, subjective criterion*